# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ**

**քննող անձի**

**թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/81**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով քաղաքացի Արսեն Անտանոսյանի կողմից 13.06.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **Քաղաքացի Արսեն Անտանոսյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

Քաղաքացի Արսեն Անտանոսյանը (այսուհետ՝ նաև բողոքաբեր) ՀՀ բողոքներ քննող անձին 13.06.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ-ի /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից լվացքի մեքենաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված

«Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝

1.1 կետի համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ավանգարդ» ՍՊԸ-ն, «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն և «Էլմարկետ» ՍՊԸ-ն:

2.3 կետի համաձայն՝ թվով 3 մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

4.1 կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 25.05.2018թ. հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ավանգարդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության.

1.2 կետի համաձայն՝ «Ավանգարդ» ՍՊԸ–ի որակավորման չափանիշները գնահատվել են համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և ընկերությունը ճանաչվել է ընտրված (հաղթող) մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2018թ. որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, սահմանվել է անգործության 10 օրացուցային օր և www.gnumner.am կայքում 08.06.2018թ. հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշումը, որի վերջնաժամկետ է նախատեսվել մինչև 18.06.2018թ. ժամը 23:00-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև որ՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է

նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով, գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի արձանագրվել, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջներին անհամապատասխան՝ հաստատված չեն էլեկտրոնային թվային

ստորագրությամբ, ինչպես նաև գնային առաջարկը ներկայացվել է սխալ՝ սահմանված մոդելի խախտմամբ՝ առանց էլեկտրոնային թվային ստորագրության:

Այս պարագայում գնահատող հանձնաժողովը գործել է ոչ ›իրավաչափ, ինչի արդյունքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 40-րդ կետի 4-ենթակետով, 41-րդ կետով սահմանված պահանջները»:

Քաղաքացի Արսեն Անտանոսյանը 27.06.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրել է Բողոքի լրացում, որով հայտնել է հետևյալը.

«Ընթացակարգի հրավերի 4.3 կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը 2-րդ չափաբաժնի համար ներակայացնում է հայտի ապահովում՝ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

Հրավերի 7.4 կետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

«Ավանգարդ» ՍՊԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է 18.05.2018թ. «ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի կողմից տրված թիվ 184105353 բանկային երաշխիքը:

Երաշխիքի 5-րդ կետի համաձայն՝ երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 2018թ. հոկտեմբերի 12-ը ներառյալ:

Ցանկանում ենք նշել, որ Հրավերի 7.4 կետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր, սակայն «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված երաշխիքի ժամկետը գերազանցում է Հրավերով նախատեսված ժամկետը, իսկ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Օրենքով և Հրավերով, հստակ սահմանված է, որ բանկային երաշխիքի ժամկետը պետք է լինի 90 աշխատանքային օր, իսկ Օրենքը սահմանում է, որ մասնակցի հայտը պետք գնահատվի Հրավերով սահմանված կարգով:

Այս պարագայում գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, ինչի արդյունքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, և Հրավերի 7.4 կետով սահմանված պահանջները»:

Ելնելով վորոգրյալից՝ քաղաքացի Արսեն Անտանոսյանը Բողոքով խնդրել է Բողոքներ քննող անձին պարտավորեցնել ՀՀ ՊՆ-ի կողմից լվացքի մեքենաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել նույն հանձնաժողովի 21.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ, 07.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված բոլոր որոշումները, և www.gnumner.am կայքում 08.06.2018թ. հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Բողոքաբերը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ նեկայացուցիչ նիստերին չի մասնակցել:

**2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 21.06.2018թ. թիվ ԴՎԱ/2916 գրությամբ քաղաքացի Արսեն Անտանոսյանի կողմից 22.06.2018թ. բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով»:

Քանի որ «Ավանգարդ» ՍՊԸ-ն չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ (ԱՀ ռեզիդենտ), ուստի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ընկերության կողմից ներկայացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ չհաստատված փաստաթղթերը գնահատել է բավարար:

Ելնելով վերը նշվածից, գտնում եմ, որ գնումների ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրության համապատասխան դրույթ չի խախտվել և չի սահմանափակվել որևէ մասնակցի իրավունք»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ նեկայացուցիչ չի ներկայացել:

**3. «Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

ԳԲԽ-ԷՍ-2018/81 բողոքի քննության շրջանակներում որպես երրորդ անձ ներգրավված «Ավանգարդ» ՍՊԸ-ն 10.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Որպես ԳԲԽ-ԷՍ-2018/81 բողոքով ներկայացված փաստական հանգամանքների վերաբերյալ լրացուցիչ ապացույց, կից ներկայացնում եմ իրավաբանական անձի պետական գրանցման վկայականը՝ նեռարյալ ներդիրները: Սույն ապացույցը վկայում է այն մասին, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ն հանդիսանում է ՀՀ ոչ ռեզիդենտ»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Ավանգարդ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

**4. ԳԲԽ-ԷՍ-2018/81 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է քաղաքացի Արսեն Անտանոսյանի կողմից 13.06.2018թ. ներկայացրած բողոքը և 27.06.2018թ. ներկայացրած բողոքի լրացումը և կից փաստաթղթերը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 21.05.2018թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի N 3 և 07.06.2018թ. նիստի N4 արձանագրությունները,

«Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի 21.06.2018թ. թիվ ԴՎԱ/2916 գրությամբ հայտնած դիրքորոշումը և կարծիքը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար լվացքի մեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով բաց մրցույթին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Ավանգարդ» ՍՊԸ-ն:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով բաց մրցույթի հրավերի Հավելված 1-ով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմումով, «Ավանգարդ» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ հանդիսանում է ԱՀ ռեզիդենտ:

«Ավանգարդ» ՍՊԸ-ն հայտով որպես հայտի ապահովում ներկայացրել է 18.05.2018թ. «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի կողմից տրված թիվ 184105353 մրցույթի երաշխիքը (բանկային երաշխիք), որի 5-րդ կետի համաձայն՝ երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 2018թ. հոկտեմբերի 12-ը ներառյալ:

Հանձնաժողովը՝ 21.05.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած հայտերի բացման նիստի N 3 արձանագրության՝

- 3.1 կետով արձանագրել է, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայցված գնային առաջարկները կազմել են համապատասխանաբար՝ 1-ին չափաբաժնի համար 36,722,500 ՀՀ դրամ, և 2-րդ չափաբաժնի համար՝ 43,358,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

- 4.1 կետով ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ավանգարդ» ՍՊԸ-ին:

Այնուհետև, 07.06.2018թ. նիստի N4 արձանագրության 1.2 կետով Հանձնաժողովը որոշել է «Ավանգարդ» ՍՊԸ–ի որակավորման չափանիշները գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, վերջինիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո Ըմկերությանը ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Քաղաքացի Արսեն Անտանոսյանը Բողոքներ քննող անձին 13.06.2018թ. ներկայացրած բողոքով, իսկ 27.06.2018թ.՝ բողոքի լրացմամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի արձանագրվել, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջներին անհամապատասխան՝ հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև գնային առաջարկը ներկայացվել է

սխալ՝ սահմանված մոդելի խախտմամբ՝ առանց էլեկտրոնային թվային ստորագրության: Բողոքաբերը գտնում է, որ տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, ինչի արդյունքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 40-րդ կետի 4-ենթակետով, 41-րդ կետով սահմանված պահանջները:

Բողոքաբերը 27.06.2018թ. Բողոքի լրացմամբ հայտնել է, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված երաշխիքի ժամկետը գերազանցում է Հրավերով նախատեսված ժամկետը, իսկ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Բողոքաբերը գտնում է, որ տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, ինչի արդյունքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, և Հրավերի 7.4 կետով սահմանված պահանջները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 383-րդ հոդվածի համաձայն՝ երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)

• 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը (...):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ, եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած, ապա նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում է դրա բնօրինակը:

• 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ (...)տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

• 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով բաց մրցույթի հրավերի՝

• 4.3 կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի համար հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

• 7.4 կետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

• 8.2 կետի համաձայն՝ Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ 2-րդ չափաբաժնի համար հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Բողոքներ քննող անձն՝ ուսումնասիրելով «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, արձանագրում է, որ.

- Հրավերի N1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումով «Ավանգարդ» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ հանդիսանում է ԱՀ ռեզիդենտ: Որպես նշված հանգամանքի ապացույց Ընկերությունը ներկայացրել է նաև իրավաբանական անձի պետական գրանցման վկայականը՝ ներառյալ ներդիրները:

- «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերը՝ ներառյալ գնի առաջարկը, ներկայացվել են հաստատված և կնիքված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

- «Ավանգարդ» ՍՊԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է 18.05.2018թ. «ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի կողմից տրված բանկային երաշխիքը, որի գործողության ժամկետ է սահմանված՝ տրման օրվանից մինչև 2018թ. հոկտեմբերի 12-ը ներառյալ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ն՝ հանդիսանալով ՀՀ ոչ ռեզիդենտ և փաստաթղթերը ներկայացնելով հաստատված և կնիքված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, գործել է Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջներին համապատասխան:

Ինչ վերաբերում է «Ավանգարդ» ՍՊԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրած «ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի կողմից 18.05.2018թ. տրված բանկային երաշխիքին, որի գործողության ժամկետ է սահմանված՝ տրման օրվանից մինչև 2018թ. հոկտեմբերի 12-ը, որը գերազնցում է Հրավերով սահմանված ժամկետը, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված երաշխիքի գործողության ժամկետը ներառում է Հրավերի 7.4 կետով սահմանված՝ 90 (իննսուն) աշխատանքային օր ժամանակահատվածը, այսինքն, ապահովում է հիշյալ փաստաթղթի ժամկետի նկատմամբ Հրավերով սահմանված նվազագույն պահանջը, դեռ ավելին՝ գերազանցում է այն, հետևաբար, նշված հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու համար:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Հանձնաժողովը «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելով՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

## Ո Ր Ո Շ Ե Ց

Քաղաքացի Արսեն Անտանոսյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 13.06.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝**

**ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**